փեաց յիւրմէն՝ կենդանիս: Սա շինեաց զՊօղոսն 'ի Հռոմ՝ բոլոր 'ի բարձրութիւնն ՃԷ. ոտնաչափ, որ երևի մինչ ցայժմ:

Կալբոս սկսաւ յամի տեառն ՀԱ. թագաւորեալ ամիս Է. և աւուրս Ն: Էր սա յոյժ խոնարհ. որ և ամենեցուն զիջանէր, և զիրկս արկեալ համբուրէր, և առ ինքն ձգէր. 'ի մէջ հրապարակին սպանաւ անա-րի զօրօք. կեանքն ոչ զոյ յայտնի:

Օգոն թագաւորեաց ամս Բ. ամիս Է: Էր սա պատերազմասէր. կեանքն ոչ զոյ յայտնի. ինքնզինքն սպան 'ի պատե-րազմի:

Վիտելլիոս սկսաւ յամի տեառն ՀԷ. թագաւորեաց ամիս Ը: Նա էր բղջախոհ յոյժ: Զոր լարով խեղդեցին ժողո-վուրդքն ի Հռոմ. վասն զի շռայլէր. կեանքն ոչ զոյ յայտնի:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան